Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
պարոն Սերգո Աթանեսյանին

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու Անահիտ Ալեքսանդրյանի 2023թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 4-ը Շվեյցարիայի Համադաշնություն գործուղման վերաբերյալ**

1. <u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>

Անահիտ Ալեքսանդրյան

2. <u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>

Շրջակա միջավայրի նախարարության իրավախորհրդատու

3. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>

Շվեյցարիայի Համադաշնություն (ք. Ժնև)
2023թ. հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 4-ը

4. <u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>

«Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի քարտուղարություն

5. <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>

Մասնակցություն Մինամատայի կոնվենցիայի մասնակից պետությունների համաժողովի հինգերորդ հանդիպմանը:

6. <u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>

2023թ.-ի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը մասնակցել եմ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի Կողմերի համաժողովի հինգերորդ հանդիպմանը Ժնևում

(Շվեյցարիա)՝ որպես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կողմից ընտրված Բյուրոյի անդամ և ԿՀ-5-ի փոխնախագահ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ հարցերը.

- Սնդիկի մատակարարման աղբյուրները և դրա առևտուրը

Այս կետի շրջանակներում քարտուղարությունը տեղեկատվություն է տրամադրել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իրականացման առաջընթացի վերաբերյալ՝ հիմնվելով Կողմերի կողմից Կոնվենցիայի 21-րդ հոդվածի համաձայն ներկայացված առաջին ամբողջական ազգային զեկույցների և Կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն Իրականացման և համապատասխանության կոմիտեի կողմից ձեռնարկված աշխատանքների վրա:

- Սնդիկի հավելիչով արտադրանք և սնդիկի կամ սնդիկի միացությունների օգտագործմամբ արտադրական գործընթացներ. A և B հավելվածների փոփոխություններ. Բ հավելվածում թվարկված արտադրական գործընթացների համար սնդիկ չպարունակող այլընտրանքների կիրառման հնարավորությունների քննարկում:
- Աֆրիկյան տարածաշրջանի առաջարկություն՝ կոսմետիկ միջոցների հետ կապված «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի Հավելված Ա-ի I և II մասերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
- Աֆրիկյան տարածաշրջանի առաջարկություն՝ ատամի լցոնումների համար նախատեսված ամալգամի վերաբերյալ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի Հավելված Ա-ի I և II մասերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
- Աֆրիկյան տարածաշրջանի առաջարկություն՝ լյումինեսցենտային լամպերի վերացման հետ կապված «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի Հավելված Ա-ի I մասում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:
- 2020 թվականի համար սահմանված՝ սնդիկի հավելիչով արտադրանքից փուլային հրաժարման վերջնաժամկետի կատարումը:
- «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայի Հավելված Ա-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու մասին տեղեկություն:
- Արհեստագործական և փոքրածավալ ոսկու արդյունահանում:
- Կողմերին ներկայացվող պահանջ, որոնք մշակել և ներկայացրել են իրենց ազգային գործողությունների ծրագրերը, կանոնավոր կերպով վերանայել պարտավորությունների կատարման ընթացքը՝ 7-րդ հոդվածին համապատասխան:
- Սնդիկի արտանետումներ

Այս կետի շրջանակներում Քարտուղարությունը տեղեկատվություն է տրամադրել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իրականացման վերաբերյալ՝ կապված սնդիկի և սնդիկի միացությունների մթնոլորտ արտանետումների վերահսկման և, հնարավորության դեպքում, կրճատման հետ, որը ներկայացվել է Կողմերի կողմից՝ համաձայն 21-րդ հոդվածի:

- Սնդիկի արտազատումներ

Այս կետի համաձայն՝ քարտուղարությունը ներկայացրել է համապատասխան աղբյուրներից արտազատումները վերահսկելու վերաբերյալ առկա լավագույն փորձի և

բնապահպանական գործունեության լավագույն տեսակների վերաբերյալ ուղեցույցի նախագիծը:

- Սնդիկային թափոններ

Կողմերի համաժողովում դիտարկվել են համապատասխան շեմային արժեքները: Սնդիկով աղտոտված թափոնների («սնդիկային թափոններ») մակարդակը որոշելիս քննարկվել է առաջարկված երեք շեմային արժեք՝ 10 մգ/կգ, 15 մգ/կգ կամ 25 մգ/կգ: Կողմերի համաժողովը որոշել է ընդունել 15 մգ/կգ շեմային արժեքը:

- Փոփոխություն, որն առաջարկում է խստացնել կոսմետիկայի մեջ սնդիկի պարունակությունը (ներկայումս ընդունված 1 ppm-ից մինչև ամբողջական արգելք)

Կողմերի համաժողովում այս հարցում կոնսենսուս չի եղել: Սրա փոխարեն լրացուցիչ հետազոտությունների անցկացման վերաբերյալ առաջարկը հետաձգել է սնդիկի ազդեցության այս կարևոր աղբյուրի վերաբերյալ գործողությունների ընդունումը, թեև ԱՀԿ-ի 2019 թվականի զեկույցը կոչ էր անում միջոցներ ձեռնարկել կոսմետիկայի մեջ սնդիկի օգտագործումը դադարեցնելու համար և նշել, որ «Սնդիկ պարունակող մաշկի գունաթափման միջոցները վտանգավոր են առողջության համար և արդյունքում արգելվել են շատ երկրներում:

Կողմերի համաժողովը, այնուամենայնիվ, ընդունեց մինչև 2025 թվականը սնդիկը որպես կոնսերվանտ պարունակող կոսմետիկ միջոցները աստիճանաբար դուրս բերելու առաջարկը:

## 7. ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ատամնաբուժական ամալգամի հետ կապված առաջընթաց է գրանցվել. Հավելված Ա-ի մաս II-ի համաձայն՝ այժմ Կողմերից պահանջվում է պատրաստել և Կողմերի համաժողովին հաշվետվություններ ներկայացնել յուրաքանչյուր 4 տարին մեկ՝ ազգային գործողությունների ծրագրերի վերաբերյալ, որոնք ուղղված են ատամնաբուժական ամալգամի օգտագործումը աստիճանաբար կրճատելուն կամ դրանից հրաժարվելուն: Ներառվել է նաև ձևակերպումը՝ ատամնաբուժական ամալգամը Հավելված Ա-ի I մասում ներառելու վերաբերյալ՝ մինչև 2030 թվականը դրա օգտագործումից աստիճանաբար հրաժարվելու նպատակով, սակայն այն ներկայացվել է Կողմերի 6-րդ համաժողովում հետագա քննարկման համար:

Բանակցությունների գլխավոր իրադարձությունը կոնվենցիայի աշխատանքներին բնիկ ժողովուրդների մասնակցության մակարդակը բարձրացնելու որոշումն էր: Պատվիրակները հավանություն են տվել մի բանաձևի, որը կոչ է անում աջակցել բնիկ ժողովուրդների մասնակցությանը սնդիկով աղտոտմանը վերջ տալու պայքարին:

Իրավախորհրդատու՝ Ա. Ալեքսանդրյան